

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 26—31-ին Հունաստանում, արևմտյան Պելեպոնեսի մեջ, տեղի ունեցավ «Սինտեսմոսի» ուղղափառների երիտասարդական երկրորդ միջազգային փառատոնը: Փառատոնի մասնակիցների հիմնական նյութը Ս. Հաղորդության խորհուրդն էր: Այս տարի առաջին անգամ էր, որ հրավիրվեց Հայ Եկեղեցու ներկայացուցիչը:

Հայ Եկեղեցուց փառատոնին մասնակցում էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

*
* *

Սեպտեմբերի 1-ին, կիրակի.—Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Աբել աբեղա Օղլուգյանը և «Հայր մեր»-ից առաջ տոնի առթիվ հավուր պատշաճի քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 15-ին, կիրակի.—Խաչվերաց:

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և Հունաստանի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, կատարվում է «Թափօր խաչվերացի» ավանդական հանդիսությունը:

*
* *

Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի

վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգոր քհն. Տերտերյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

*
* *

Սեպտեմբերի 20-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռի պաշտոնեությունը հավաքվել էր Վեհարանի ընդունարանում՝ շնորհավորելու Նորին Սրբության ծննդյան 77-րդ տարեդարձը: 77 վարդերի բույրը լցրել էր դահլիճը: Վեհափառ Հայրապետը պայծառ ժպիտով ողջունեց բոլոր ներկաներին: Ապա հանուն Մայր Աթոռի ողջ պաշտոնեության ողջույնի և շնորհավորանքի խոսք ասաց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը: Նա Նորին Սրբությանը մաղթեց երկար, արևշատ և բազմաբեղուն կյանք՝ ի փառս Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի:

Ապա շնորհակալության և օրհնության ջերմ խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը՝ ընդգծելով, որ այն, ինչ ստեղծվել է իբրև իրագործում, ստեղծվել է պաշտոնեության միասնական ջանքերով, և հույս հայտնեց, որ հետ այսու ևս համագործակցաբար կհասնեն նորանոր նվաճումների:

*
* *

Սեպտեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը քարոզ խոսեց՝ հետևյալ բնաբանով. «Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ: Եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ: Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր» (Ղուկաս ԻԱ 17—18):

Քարոզի ընթացքում սրբազան հայրը ընդգծեց, որ Քրիստոսի անունը հոմանիշ է ճշմարտության, որի համար Նրա հետևորդները կարող են աշխարհում հալածվել: Սակայն նրանց գլխից մազ անգամ չպիտի կորչի, քանի որ տևական հաղթանակի այս խոսքերը բոլոր նրանց համար են, ովքեր հավատարիմ են գտնվել Քրիստոսի անվանը կամ նրա ճշմարտությանը: Սրբազան հայրը շնորհավորելով նաև Վեհափառ Հայրապետի գահակալության 30-րդ տարեդարձը, զուգահեռներ անցկացրեց Նորին Սրբության գործունեության և Քրիստոսի կողմից ասված այս գաղափարների միջև՝ որպես այդ ճշմարտության հավատարիմ սպասավոր, դրանով իսկ նպաստելով մեր Եկեղեցու համակողմանի զարգացմանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ.—Սրբոցն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Ադոկտոսի և Ռոմանոսի երգեցողին:

Այսօր Մայր տաճարում կատարվեց կիրակնամուտի հանդիսավոր ժամերգություն, որին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Կ. Պոլսո հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը, Վրաց Եկեղեցու Պատրիարք-կաթողիկոս Տ. Իլիա Բ-ն իր շքախմբով, ինչպես նաև Հայ Եկեղեցու արտասահմանյան թեմերից մի խումբ քարձրաստիճան հոգևորականներ:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանի դահլիճում ցուցադրվեցին Հայրապետական ընտրության (1955 թ.) և 1983 թ. մեռնօրհնության կինոժապավենները:

*
* *

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ.—Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ է խոսում Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը:

*
* *

Հոկտեմբերի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում Տ. Պարգև աբեղա Մարտիրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսում՝ «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին.

հաստատելով յերկրի վգիր կենդանի՝ հովուել ըկիօտ Նոր Իսրայելի» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 13—19-ին Ֆրանսիայի Սեթ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների երիտասարդաց խորհրդի հերթական՝ XVII տարեկան ժողովը: Այս հանդիպման նպատակն էր՝ ամրապնդել և հաստատել յուրաքանչյուր շրջանայինի դիրքը ժողովի ղեկավար կազմի մեջ:

Ժողովին մասնակցում էր նաև Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

*
* *

Հոկտեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում Տ. Պսակ աբեղա Կարապետյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Եւ տեղին այն լիցի տաճար Աստուծոյ, և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, և աթոռ քահանայապետութեան» (Ագաթանգեղոս, «Հայոց պատմութիւն», էջ 420) բնաբանով:

*
* *

Նույն օրը իրենց անդրանիկ ս. պատարագները մատուցեցին նորընծաներ Տ. Մաշտոց աբեղա Խաչիկյանը (Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում)՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակաց Ա 2) բնաբանով, Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը (Ս. Գայանե եկեղեցում)՝ «Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մատթեոս ԻԸ 19) բնաբանով, Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանը (Երևանի Ս. Սարգիս եկեղեցում)՝ «Իւրաքանչիւր յոյ կոչումն կոչեցաւ, եղբարք, ի նմին կացցէ, առաջի Աստուծոյ» (Ա Կորնթ. Է 24) բնաբանով:

*
* *

Հոկտեմբերի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մաշտոց աբեղա Խաչիկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսում՝ «Զի ճառ խաչին կորուսելոցն հիմարութիւն է այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 17) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 30-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում ցուցադրվեց կինոռեժիսոր Ս. Փարաջանովի «Լեգենդ Սուրամիի ամրոցի մասին» կինոժապավենը:

Ֆիլմի ցուցադրմանը ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանությունն ու ուսանողությունը: